Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԵՐԵՎԱՆԻ Հ.104 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Գ.Դ.ՊՐՈՖԵՍՈՐ ՋՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1

Կրտսեր դպրոցականների կապակցված բանավոր խոսքի զարգացումը մայրենիի դասերին

1.1.Բանավոր խոսքի ներկայացվող պահանջները……4-8

1.2.Կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման մեթոդները ……9-16

1.3.Կապակցված խոսքի ներկայացվող պահանջները ……17-19

Գլուխ2

Հարցաթերթիկային վերլուծություն……..…..18-22

Եզրակացություն……23

Օգտագործված գրականության ցանկ…… 24

Ներածություն

Մեր հետազոտության թեմայի արդիականաությունը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից մարդու բազմապիսի գործունեության ընթացքում չափազանց կարևոր է կապակցված բանավոր խոսքը , որի ձևավորմանը տարրական դպրոցում մեծապես նպաստում է մայրենիի դասերին կատարած վարժությունները , կարդալու շարունակական գործընթացը:

Մեր թեմայի ուսումնասիրության **նպատակն** է ՝ մշակել կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի ձևավորման ուղղությամբ մեթոդական ցուցումներ, որոնց կիրառումը կնպաստի աշակերտների կապակցված խոսքի ձևավորմանը:

Մեր առջև դրված նպատակին հասնելու համար, մենք դնում ենք մի քանի **խնդիրներ**՝

1. Ուսումնասիրել հետազոտության թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն , դիտարկել հիմնական սկզբունքները,
2. Ուսումնասիրել տարրական դպրոցում մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների կապակցված խոսք կառուցելու ձևավորման գործընթացը,
3. Ծանոթանալ և քննարկել կրտսեր դպրոցականների կապակցված բանավոր խոսք կառուցելու ձևավորման ուղղությամբ գործընկերների կարծիքները,
4. Ծանոթանալ և քննարկել կրտսեր դպրոցականների բանավոր խոսք կառուցելու ուղղությամբ մեթոդական ցուցումներ, որոնք կնպաստեն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի ձևավորմանը:

Գլուխ 1

Կրտսեր դպրոցականների կապակցված բանավոր խոսքի զարգացումը մայրենիի դասերին

1.1 Բանավոր խոսքին ներկայացվող պահանջները

Բանավոր խոսքը հանդես է եկել գրավորից վաղ ՝ որպես հաղորդակցման անմիջական պահանջմունք: Ձևավորման սկզբնական ՝ մանկության փուլում այդ կարողության զարգացման ուղղությամբ հատուկ աշխատանքի կարիք չի զգացվում: Այնինչ գրավոր խոսք կառուցելու կարողությունը ձևավորում է հատուկ ուսուցման ճանապարհով, որի ընթացքում ընդգծվում է բանավոր խոսքի առաջանցիկ զարգացումը: Գրավոր խոսքի զարգացումն ու ձևավորումը բանավորի համեմատ առավել հագեցած և բարդ գործընթաց է , իրականացվում է դանդաղորեն: Բանավոր խոսքում գործածվող նախադասություններն ավելի ընդարձակ են, նրանց կառուցվածքում առկա են զանազան խոսքային կառույցներ, որոնք բարդացնում են նախադասությունը: Միևնույն խոսքի գրավոր տարբերակում հնարավոր չէ արտահայտել հոգեբանական դադարները, տրամաբանական շեշտերը , արտասանական երանգավորումները: Եթե բանավոր խոսքում կարևորում են ուղղախոսությունն ու տարաբնույթ լեզվաարտահայտչամիջոցները , ապա գրավոր խոսքը ծանրաբեռնված է ուղղագրությամբ և կետադրությամբ :

Գոյություն ունեն որոշակի պայմաններ , որոնք անհրաժեշտ է խոսքային գործունեության ժամանակ և հաշվի առնել երեխաների խոսքի ձևավորման գործընթացում:

1. Խոսելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն, այսինքն ՝ խոսելու պահանջմունք: Առանց իր զարգացումները, մտքերը, ձգտումներն արտահայտելու ցանկության մարդը, բնականաբար, չէր խոսի ի սկզբանե: Մանկության գեղգեղանքի փուլում սկսվում են ձևավորվել և դրսևորվել երեխայի զգացմունքները : Նա գեղգեղում է կամ թոթովում , երբ տրամադրությունը բարձր է , ուրախ է , առողջ է , և ոչ մի բան նրան չի անհանգստացնում: Նա գեղգեղանքով արտահայտում է իր պայծառ զգացմունքները:

Տարիքի հետ աստիճանաբար զարգանում, բարդանում ու կատարելագործվում են երեխայի զգացմունքները , ինչպես նաև դրանց արտահայտման , դրսևորման ձևերը: Երեխան սկսում է ճանաչել աշխարհը, շրջապատը, մարդկանց, և ծագում է իր վերաբերմունքը ,

զարգացումներն արտահայտելու բուռն ցանկություն, ու նա այդ բոլորը սկսում է արտահայտել ձայներով, բառերով, բառակապակցություններով, նախադասություններով, կապակցված խոսքով: Մտնելով խոսակցության մեջ՝ յուրաքանչյուր խոսող ունենում է որոշակի նպատակներ . մի բան հաղորդել , որևէ հարցի մասին կարծիք հայտնել , մի բան հարցնել , խնդրել և այլն: Որպես կանոն մենք գիտենք, թե ում է ուղղված մեր խոսքը: Ունկնդիրն էլ ունի իր հիմնական մտադրությունը՝ տեղեկույթ ստանալ , հասկանալ , թե ինչ է ուզում իր խոսակիցը: Ոչ միշտ են մանկավարժներին մտահոգվում, որ աշակերտների մեջ առաջանա հաղորդակցվելու պահանջմունք, առավել ևս՝ հնարավորություն տալիս , որ նրանք արտահայտեն իրենց զգացմունքները: Արդյունքում աշակերտը ստեղծում է խոսք, շարադրություն է գրում որովհետև այդպիսի հանձնարարություն է ստացել ուսուցչից: Այս դեպքում աշակերտը հաղորդակցման դրդապատճառը չի ունենա , որովհետև ուսուցիչը չի ապահովել հաղորդակցման որոշակի իրադրություն , և աշակերտները պարզապես կգրեն շարադրություններ կամ կպատասխանեն ուսուցչի հարցերին՝ առանց ոգևորության , ապրումների , զգացմունքների. Պարզապես կկատարեն իրենց պարտականությունները:

Երբ աշակերտը ուզում է խոսել և խոսում է ոգևորված , առանց դադար տալու , նշանակում է՝ նա ասելիք ունի , ինչ-որ բան նրան մտահոգում է , հուզում է , և նա ուզում է այս մասին բոլորն իմանան : Անհրաժեշտ է ոչ միայն համբերատար կերպով նրանց լսել, չխանգարել , չընդհատել , այլև փորձել նրան հասկանալ , ապրումակցել՝ առանց ընդհատելու , առանց խոսքային սխալները շտկելու և դառնալով ակտիվ ունկնդիր՝ սատարել, աջակցել նրան , ոգևորել , խրախուսել:

Խոսքային գործունեությունը երկկողմանի գործընթաց է : Ուրեմն անհրաժեշտ է նաև մշակել աշակերտների նպատակասլաց կերպով ուրիշի մտքերը ընկալելու ունակություն , այսինքն՝ հանդես գալ ոչ միայն որպես խոսող , որևէ նյութ հաղորդող , այլև ունկնդիր , ընկալող խոսքի հասցեատեր:

Ուսումնասիրություններն ցույց են տվել , որ <<դեռևս երեք տարեկան երեխաները կարող են իրենց խոսքում թույլ տված սխալները զգալ և ուղղել, նկատել ուրիշների սխալները…

Կարող են տարբեր խաղերի ժամանակ իրենց տարած դերին համապատասխան փոխել իրենց խոսքային վարքը և հաղորդակցման պայմաններին համապատասխան խոսքը

հարմարացնելու փորձել կատարել , զգալ իրենց խոսքի հաջողությունն ու անհաջողությունն և անհրաժեշտության դեպքում ոչ միայն կրկնել միտքը , այլև փոփոխել դրանք:>>

2.Խոսելու նյութի առկայությունը: Խոսքը կառուցելուց առաջ, բնականաբար, պիտի մտածել խոսելու նյութի մասին՝ նկատի ունենալով , որ որքան այն ընդարձակ է ու հարուստ , փաստերը ՝ արժեքավոր ու հիմնավոր , այնքան խոսքը բովանդակալից է, հետաքրքիր և ուշագրավ: Աշակերտների կառուցած խոքի հստակությունը, տրամաբանությունը, հարստությունը, բովանդակությունը պայմանավորված են խոսելու նյութի նախապատրաստվածությամբ:

Երեխաները որևէ հարցի շուրջ խոսեցնելուց գիտեն, լրացուցիչ ինչ տեղեկատվություն , փաստեր է պետք հաղորդել , որպեսզի նրանց խոսքը հարուստ և սպառիչ ,ավարտուն լինի:

3.Խոսքի ընդունված կանոններով աշակերտներին զինելը: Լեզվական միջոցների , խոսք կառուցելու կանոնների յուրացման նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է երեխաներին տալ խոսքի օրինակելի նմուշներ , ինչպես նաև նրանց համար ստեղծել բարենպաստ խոսքային միջավայր: Ստեղծագործության ընթերցումը, նրա բովանդակության վերարտադրումը դեռևս բավարար չեն երեխայի խոսքի հարստացմանը, այն ընդունված կանոններով հյուսելու պահանջի կատարման համար: Այս խնդիրների լուծման նպատակով պիտի կարդացած ստեղծագործության մեջ առանձնացնել օրինակելի լեզվական կառույցները , հենակետային մտքերը, արտահայտությունները, բառերը և բազմաբնույթ վարժությունների համակարգի կատարման ճանապարհով դրանք դարձնել սովորողների սեփականությունը:

4.Հասկանալ այն ամենը, ինչի մասին խոսվում է, ընկալել խոսքի տրամաբանությունը , հերոսների , գործող անձանց բնավորությունն ու գործելակերպի նրբությունները :

5.Տարբերել գործող անձերի տրամադրությունը և այն ներկայացնել ոչ միայն ձայնային , այլև լեզվական արտահայտչական միջոցներով ՝ թվարկման , կրկնության ,շեշտման ընդգծման հակադրման, մտքի ավարտը ընդգծող արտասանական տարբեր երանգավորումներ:

6.Ապահովել կապը ունկնդրի հետ. Խոսելիս ուշադրությամբ հետևել, թե ինչպես են մարդիկ քեզ լսում , հասկանում են արդյոք քեզ , հետաքրքի՞ր է քո խոսքը , չե՞ն ձանձրանում արդյոք ունկնդիրները , չի՞ ցրվել նրանց ուշադրությունը:

1.2. Կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման մեթոդները

Մանկավարժության տեսության մեջ ընդունված են ուսուցման գործընթացի իրականացման մեթոդների բազմաթիվ տեսակներ:

Ուսուցման մեթոդների դասակարգումը

Ըստ աշակերտների ակտիվության մակարդակի

Պասիվ

- Պատմում
- Դասախոսություն
- Բացատրություն
- Էքսկուրսիա
- Ցուցադրություն
- Դիտարկում

Ակտիվ

- Լաբորատոր
- Գործնական
- Աշխատանք գրքի շուրջ:

Ըստ գիտելիքների ձեռքբերման աղբյուրի

Պատմողական

- Պատմում,
- Բացատրություն
- Զրույց,
- Բանավեճ
- Դասախոսություն
- Աշխատանք գրքի շուրջ

Զննական

- Դիտողական պարագաներ
- Գծապատկեր
- Գծապատկերներ
- Նկարներ,
- Սարքվորումներ,
- Կինո, տեսաֆիլմեր, սահիկներ

Գործնական

- Վարժություններ,
- Լաբորատոր աշխատանքներ
- Գործնական աշխատանքներ
- Փորձեր
- Շարադրություններ
- Աղյուսակներ
- Սարքերի պատրաստում

Ուսուցման մեթոդները ըստ գիտելիքների աղբյուրի

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման մեթոդիկա հենվում է պրակտիկայում մշակված ավանդական մեթոդների վրա, որոնք դասակարգվում են հիմք ընդունելով դրանց իրականացման ժամանակ գործածվող միջոցները զննականությունը, բառը, խոսքը և սովորողների գործունեությունը: Ուսուցման մեթոդներն ավանդաբար բաժանվում են 3 խմբի՝ զննական, խոսքային և գործնական, որոնք հիմնականում հանդես են գալիս փոխկապակցված։

Զննական մեթոդները տարրական դպրոցում հաճախակի են կիրառվում ,ընդ որում ՝ կիրառվում են ավելի շատ դիտման մեթոդը և նրա տարատեսակները: Կարևորվում է ,մասնավորապես իրազննությունը (խաղալիքներ, նկարներ, լուսանկարների դիտում, նկարների նկարագրում, դիդակտիկ խաղեր, նկարների շուրջ պատմումներ և այլն), որը կիրառվում է գիտելիքների ամրակայման, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի զարգացման նպատակներով:

Խոսքային մեթոդները տարրական դպրոցում նույնպես լայն կիրառություն ունեն, գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն ու պատմումը, արձակ և չափածո ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը և այլն: Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ, անշուշտ, կարելի է օգտագործել նաև դիտողական պարագաներ։ Խոսքային մեթոդների արդյունավետությունը մասնավորապես ակնառու է ներկայացումների դիտման, դրանց քննարկման, ներկայացման թեմաներով կինոնկարների, կարդացած ստեղծագործությունների) բանավեճերի հանդիպումների և խոսքային բազմազան վարժանքների կատարման ժամանակ, սակայն կրտսեր դպրոցականներին ամենից շատ մատչելի է զրույցը իր բոլոր տեսակներով:

Գործնական մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառմանը, ունակությունների ու կարողությունների կիրառման կատարելագործմանը: Գործնական մեթոդների թվին են պատկանում տարաբնույթ խոսքային վարժությունները, լեզվական խաղերը, խաղ–բեմականացումները, "ուշագրավ թեմաներով հոգեբանամանկավարժական վարժանքները և այլն։

Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումները և դրանց բովանդակության քննարկումն ու վերարտադրումը, գեղարվեստական ստեղծագործությունների

ընթերցումը և պատմումը, տարաբնույթ նյութերի անգիր սովորելը, գրական ստեղծագործությունների բովանդակության հիման վրա իրականացվող խաղ–բեմականացումները, իրադրային և դիդակտիկ խաղերը և այլն: Սրանց կիրառման ժամանակ երեխաները խոսքային նմուշի հիման վրա յուրացնում են որոշակի բառապաշար, խոսքային կառույցներ, դարձվածքներ, ընդօրինակում են պատրաստի խոսքը և այլն։Ստեղծագործական մեթոդները նպաստում են կապակցված խոսքային արտահայտություններ կառուցելու կարողության ձևավորմանը, աշակերտը ոչ թե վերարտադրում է իրեն հայտնի լեզվական միավորները, այլ ստեղծում նոր համակցումներ՝ առաջնորդվելով հաղորդակցման իրադրության պահանջներով, առանձնահատկություններով։ Ստեղծագործական մեթոդներից են ամփոփիչ զրույցները, ընթերցածի ստեղծագործաբար վերարտադրումը և շարունակություն հյուսելով ու բնագրի ձևափոխված պատմումը, իրադրությունային խաղերն ու երկխոսությունները և այլն: Աշակերտների խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները մայրենիի դասերի ժամանակ կազմակերպվում են ինչպես դասագրքերի մեթոդական կառույցում տրված հարցերի ու առաջադրանքների, օժանդակ բաղադրիչների, այնպես էլ հատուկ նպատակով տրված իրադրությունային մենախոսությունների ու երկխոսությունների միջոցով: Այդ ամենն ի վերջո իրականացվում է:

1. Ակտիվ մեթոդներով

- ✓ **Դերային խաղեր**: Դերային խաղերի ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություններից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կարճ խոսքային դրվագներ, որպես կանոն՝ պրոբլեմային,

Ներկայացնել կարդացած ստեղծագործության դիպվածաշարերը և այլն: Դերային խաղերի ժամանակ մասնակիցներն ստանձնում են որևէ դեր, սեփական որևէ տեսակետ և փորձում են այն հասունացնել և ավարտել: Դրանք շահեկան է կազմակերպել ինչպես դասաժամի ընթացքում ուսումնական նյութի իմաստավորման փուլում, ճիշտ այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա, այնպես էլ կշռադատման I փուլում աշակերտներին տալով ձեռք բերած գիտելիքները կիրառելու հնարավորություն։ Դերային խաղերը հաճախ կիրառվում են որևէ թեմայի շուրջ սովորողների միջանձնային

հարաբերությունների կարգավորման և հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով:

- ✓ **Դասարանային շրջան**: Համադասարանցին որևէ խնդիր քննարկելիս շահեկան է նստել ով, որը կօգնի աշակերտներին անկաշկանդ, շրջանով, սրտաբաց և համարձակ արտահայտելու իրենց մտքերը: Այսպիսի պայմաններում կստեղծվի անմիջական մթնոլորտ, և աշակերտները համարձակ կզրուցեն, կընդհատեն իրար, կհակադրվեն՝ նայելով իրար երեսի, իրար աչքերի մեջ, կնկատեն միմյանց դիմախաղերը, ժեստերը և դրանով է ավելի կներքաշվեն խոսակցության, բանավեճի, զրույցի մեջ: Դասարանային շրջանի կազմակերպման ժամանակ կարևոր է ընտրված թեման, որի շուրջ աշակերտները պիտի մտնեն խոսակցության մեջ: Այն պիտի աշակերտներին ծանոթ լինի իրենց կենսափորձից, նրանք այդ թեմայից պիտի նախապես հիմնավոր տեղեկություններ և բառապաշար լինեն և այլն:
- ✓ **Մտքերի տարափ:** Մտքերի տարափը թեև երկարատև նախապատրաստություն չի պահանջում, սակայն այն իրականացվում է որոշակի ժամանակի ընթացքում աշակերտների ձեռք բերած գիտելիքների համոզմունքների որոշակի թեմայից անց ընդհանուր պատրաստվածության հիման վրա: Աշխատանքն սկսելուց առաջ աշակերտներին ներկայացվում է այն խնդիրը, որի շուրջ նրանք պիտի արտահայտեն իրենց կարծիքը, ներկայացնեն իրենց գիտելիքները: Քննարկվող խնդիրը՝ կան թեման գրվում է գրատախտակին կամ մեծ ճերմակ թղթի վրա, որը փակցվում է պատին:

Աշակերտներին առաջարկվում է արտահայտել առաջին իսկ վայրկյանին իրենց մեջ ծնված տեսակետը՝ առանց մեկնաբանության: Բոլոր մտքերն ու

գաղափարները գրանցվում են գրատախտակին կամ մաքուր թղթի վրա: Մտքերի տարափ վարժանքն ունի յոթ կետից կազմված կանոն, որոնց պահպանմամբ միայն կապահովվի վարժանքի արդյունավետությունը.

1. քննադատության բացակայություն
2. արտահայտած մտքերի խրախուսում,
3. բոլոր մասնակիցների համար հավասար պայմանների ստեղծում,
4. զուգորդումների (մտքերի կրկնության) հանդուրժում
5. գանկացած մտքի գրառում,
6. << ճիշտ>> ու <<սխալի>> բացառում,
7. վերլուծության համար անհրաժեշտ ժամանակի տրամադրում:

Ստեղծագործական օրագրի վարում: Օրագրի վարումը ուսումնական գործընթացում նպաստում է սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը և թե՛ աշակերտների, թե ուսուցչի համար գործունեության ուշագրավ ձև է:

Այս հնարն աշակերտներին կօգնի.

-անկեղծորեն և անմիջական կերպով արտահայտելու իրենց զգացմունքներն ու մտքերը (գրավոր),

- ավելի հստակորեն պատկերացնելու սեփական ստեղծագործական կարողությունների մակարդակը և աշխատել դրանց զարգացման ուղղությամբ,

- որոշել անձնային այն որակները, որոնք ցանկանում են սերմանել իրենց մեջ,խոսել այդ մասին և դրանք իրականացնել,

-սովորել խոսքային միջոցներով ներկայացնել և վերլուծել ինչպես ուրիշների, այնպես էլ սեփական արարքները, ձևակերպել և գրի առնել դատողություններ,

-զարգացնել ու բարելավել իր և ուրիշների հարաբերությունները՝ գործածելով բարեկիրթ խոսքի հնարներ:

<<Ստեղծագործական օրագրի>> վարում տարրական դպրոցում իրականացվում է սկսած երկրորդ դասարանից աշակերտներին հանձնարարվում է պահել հատուկ տետրեր, որոնց մեջ նրանք կատարում են տարաբնույթ ստեղծագործական առաջադրանքներ: Այդ տետրերը հաճախ անվանում են <<Հրաշք տետր>>, <<Ստեղծագործական օրագիր>> և այլն:

2. Բանավեճեր, հարցազրույցներ

Ինչպես նշվեց բազմիցս, տարրական դասարաններում մայրենիի (և ոչ միայն դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադրումից, առարկություն չընդունող դատողություններից, որոնք աշակերտից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել: Բանավեճերի, հարցազրույցների, տարաբնույթ երկխոսությունների կազմակերպումն ինչպես դասագրքի, այնպես էլ սեփական ստեղծագործական զինանոցի միջոցներով ուսուցչի վարպետության և նրա աշակերտներին ինքնուրույն մտածելու, դատողությունների մղելու ունակությունների դրակորումն է:

Թե՝ բանավեճերը, թե հարցազրույցները բծախնդրորեն պիտի նախապատրաստել սակայն չպետք է դարձնել բեմականացում: Բանավեճը շահեկան է անցկացնել կլոր սեղանի շուրջ, որպեսզի բոլոր մասնակիցները կարողանան իրար տեսնել, գտել ,հավասար հարթությանե վրա: Բանավեճը վարողը (ուսուցիչը կամ աշակերտը հարցերի միջոցով պետք է նրբանկատորեն բանավեճի մասնակիցներին ուղղորդի պահպանելով արտահայտվելու հավասար պայմաններ: Բանավեճի կազմակերպման քայլերն են.

• ներկայացնել բանավեճի թեման (շահեկան է փակցնել պատին),

• ծանոթացնել հրավիրված մարդկանց, և հիմնավորել նրանց կապը քննարկվող թեմային,

• հստակեցնել բանավեճի սահմանները, ոլորտներն ու ուղղությունները,

• ներկայացնել և քննարկել կանոնակարգը,

•փոքրածավալ խոսքով հաղորդել այն ներածական տեղեկույթը, որը կօգնի մասնակիցներին, նրանց կմղի խոսակցության, այսինքն՝ կխթանի բանավեճի ընթացքի անկեղծությունը:

Բանավեճի կանոններն են.

• չշեղվել թեմայից,

• պահպանել սահմանված ժամանակակարգը,

• հարգել միմյանց կարծիքը,

•մասնակիցների համար ստեղծել հավասար պայմաններ,

• ուշադիր լսել և մասնակցել քննարկումներին,

• լինել հանդուրժող այլոց կարծիքների նկատմամբ:

Բանավեճ կարելի է անցկացնել ինչպես նույն դասարանի աշակերտների, այնպես էլ

զուգահեռ դասարանների միջև: Մասնակից խմբերի կենսափորձն ու գիտելիքների մակարդակները պիտի միևնույնը լինեն: Բանավեճը տալիս է երևույթները նոր և այլ տեսանկյուններից դիտարկելու հնարավորություն, նպաստում է հաղորդակցական կարողության զարգացմանը, իսկ գիտելիքների, տեսակետների և համոզմունքների փոխանակումն օգնում է սովորողների հայացքների, համոզմունքների փոփոխությանը:

3. Փոքր խմբերով աշխատանք

Այս դեպքում նախատեսված առաջադրանքները հանձնարարվում են ոչ թե ամբողջ դասարանին, այլ նախապես ձևավորված առանձին խմբերի (միայն տվյալ առաջադրանքի կատարման համար):

Ուսուցման բոլոր մեթոդների կիրառման ժամանակ էլ որպես խոսքը հարստացնելու զգացմունքային հնարներ հանդես են գալիս բանաստեղծությունը, երգ-երաժշտությունը, նկարչությունը, դիտումները, հանդիպումները, ցերեկույթները, էքսկուրսիաները և այլն:

Շահեկան է այս ուղղությամբ աշխատանքն սկսել որքան հնարավոր է վաղ, հասնելով նրան, որ աշակերտները գիտակցեն, թե յուրաքանչյուր մարդու կյանքում որքան կարևոր են որևէ լուր հաղորդելու, զրուցելու, խոսքային շփումներ ստեղծելու, հետաքրքիր պատմելու, հումորով խոսելու, որևէ առիթով ջերմ խոսքեր ասելու կամ գրելու, վեճի ժամանակ խոսքով պաշտպանվելու, արդարանալու կամ վեճը խոսքով վարպետորեն հարթելու կարողությունները:

Փոքր խմբերով, ընդհուպ մինչև զույգերով աշխատանքը վաղուց է մտել ուսումնական ոլորտ: Փոքր խմբերով աշխատանքն ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է, որը սովորողներին տալիս է դասընկերների հետ ազատ, անկաշկանդ զրուցելու, գիտելիքներ փոխանակելու ծագած խնդիրները համատեղ լուծելու, միմյանց սովորեցնելու հնարավորություն: Տարրական դպրոցում կազմակերպվում են խմբային աշխատանքի տարբեր ձևեր դասակարգման զանազան եղանակներով խմբերի դասակարգման ձևը պիտի ընտրել ելնելով ուսումնասիրվող առարկայի ինքնատիպությունից, թեմայի բովանդակությունից, աշակերտների տարիքից, դասարանի մակարդակից և այլն: (ոլոր դեպքերում պիտի կարևորվեն ուսումնական գործընթացի արդյունավետությունն ու սովորողների շահերը:

Եթե խմբային աշխատանքը աշակերտներից պահանջում է միայն աշխատել, սակայն նրանք դրա համար դրական շարժառիթներ չունեն, ապա այդ խմբերը կոչում են ,կեղծ խմբեր: Ավանդականե խմբերը սովորաբար կազմված են աշակերտներից, որոնց պարզապես հանձնարարվել է միասին աշխատել, բայց դրա անհրաժեշտությունը տվյալ թեմայի ուսումնասիրության գործընթացի համար անհրաժեշտություն չի ներկայացնում: Արդյունավետ խմբերը ոչ միայն ստանում են միասին աշխատելու հանձնարարություն, այլև աշխատանքի թեման ու խնդիրները, հիմնավորում են խմբային աշխատանքի

անհրաժեշտությունը (խնդիրը չեն կարող լուծել առանց համագործակցության), իսկ սովորողները համոզվում են դրանում և գիտակցաբար համագործակցում են, քանի որ ունեն մեկ ընդհանուր նպատակ։

Անառարկելի է, որ բանավոր և գրավոր խոսքը, որպես կանոն, ձևավորվում է որոշակի իրադրություններով պայմանավորված, այսինքն, իրադրությունային բնույթ ունի, և այն զարգացնելու ամենաարդյունավետ ուղին դասի ժամանակ հաղորդակցական իրադրությունների ստեղծումն է. միայն որոշակիորեն հոգեհարազատ և ըմբռնելի իրադրությունների մեջ գտնվելով աշակերտը կփորձի ընտրել և գործածել խոսքային ճիշտ կառույցներ, որոնք ներկայացնում են հաղորդակցական հենց այդ իրադրության բովանդակությունը, հաջողությամբ լուծում այդ ժամանակահատվածում ծագած խնդիրները օգտվելով իր ակտիվ բառապաշարից, ծանոթ լեզվական կառույցներից կամ ստեղծելով նորերը:

Մայրենիի դասի խնդիրներն այնքան շատ են և բազմաթիվ, որ ոչ միշտ է հնարավոր ստեղծել խոսքի զարգացմանը միտված իրադրություններ։ Հաճախ դրանք կարող են լինել նաև շինծու, արհեստական բնականաբար, ոչ մի ազդեցություն չթողնելով երեխաների խոսքի զարգացման գործընթացի վրա: Ուրեմն առավել շահեկան է խոսքի զարգացման ծրագրային խնդիրները լուծել առանձին դասաժամերին, որոնք նախատեսված են մայրենիի առարկայական ծրագրով:

• նախագծային մեթոդ

Կապակցված խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև նախագծային աշխատանքը, որը սովորողակենտրոն ուսումնական գործընթաց է և ուսուցչակենտրոնից շահեկանորեն տարբերվում է նրանով, որ նախկինում առաջատար սուբյեկտը՝ ուսուցիչը, դառնում է սովորողներին զուգընկեր, աշակերտների հետ մտնում է հաղորդակցության մեջ, և ստեղծվում է աշակերտ–ուսուցիչ խոսքային համագործակցության ձև:

Ուսուցիչը ուսումնական տարին պլանավորելիս պիտի առանձնացնի այն գլխավոր թեմաները, որոնք պետք է ուսումնասիրվեն նախագծային մեթոդով և ներկայացվեն գրավոր կամ բանավոր հաղորդումներով: Այս գործողությունն իրականացվում է խմբային մեթոդով, իսկ ուսուցիչն այդ ընթացքում հանդես է գալիս անկախ խորհրդատուի դերում:

Նախագծային մեթոդով աշխատելիս սովորողներն ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ պիտի ձեռք բերեն նոր տեղեկատվություն, յուրացնեն այն, վերլուծեն և ներկայացնեն կապակցված խոսքի տարբեր ոճերով: Այս ընթացքում ծագած դժվարությունների հաղթահարումը նախագծային մեթոդի առաջնային մանկավարժական նպատակն է: Նախագծի կատարման ընթացքում սովորողները հայտնվում են իրենց համար բոլորովին նոր իրավիճակում, որից ելքեր որոնելու աշխատանքն էլ ակտիվացնում է նրանց իմացական գործունեությունը, ձեռք են բերում մտավոր գործունեության սեփական փորձ, որն էլ ընկած է խոսքի զարգացման գործընթացի հիմքում:

Բանավոր և գրավոր խոսքի զարգացման նպատակով իրականացրած հաղորդակցական իրադրությունները սկզբունքորեն իրարից տարբերվում են: Բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանք պիտի իրականացվի տարրական դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերին ուսումնական երկխոսության սահմաններում: Ուսումնական երկխոսությունն է հենց այն բնական իրադրությունը, որի մեջ հայտնվում է աշակերտը, այն կարող է լինել ինչպես ուսուցչի, այնպես էլ համադասարանցիների հետ, ինչպես ուսումնական, այնպես էլ արտաուսումնական խնդիրների շուրջ: Գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվում է նախապես պլանավորված դաս՝ գրավորի դաս:

1.3. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բարեկիրթ խոսքի մշակույթը ոչ միայն ճիշտ, գրական լեզվի չափանիշներին համա պատասխան մակարդակով խոսելու և գրելու կարողությունն է, այլև կիրթ, գրագետ, ներգործուն, տպավորիչ հաղորդակցվելու ունակությունը՝ հաշվի առնելով խոսակցին, խոսակցության նպատակը, վայրը և այլն:

Կապակցված խոսքին ներկայացվում են հետևյալ պահանջները

ա) խոսելու նյութի մասին որոշակի գիտելիքների, տեղեկությունների, փաստերի առկայությունը,

բ) խոսքի կառուցվածքի պարզությունը, մտքերի տրամաբանական հետևողականությունն ու հստակությունը,

գ) թեմայի բացահայտման տրամաբանությունը,

դ) անհրաժեշտ բառամթերքի ճիշտ ընտրությունը և դիպուկ գործածումը,

ե) անհրաժեշտ արտահայտչամիջոցների ճիշտ ընտրությունն ու տեղին գործածությունը,

զ) խոսակցի անձի առանձնահատկությունների հաշվառումը (տարիքը, սեռը,կարգավիճակը և այլն),

է) տվյալ լեզվի գրական նորմերին համապատասխանությունը:

Խոսքի որակական հատկանիշներն են **բովանդակայնությունը, ճշգրտությունը, տրամաբանությունը, հարստությունը, արտահայտչականությունը, պարզությունը, ճշտությունը:**

Խոսքը բովանդակային է, եթե խոսողը կամ գրողը իրենց խոսացածի ու գրածի մասին ունեն որոշակի գիտելիքներ, տեղեկույթ և դրանք ներկայացնում են ճշգրտորեն, տեղին և լիարժեք կերպով՝ խոսքը կառուցելով ոչ միայն փաստերի, դիտումների, համոզմունքների վրա, այլև ձևակերպելով ավարտուն և ամբողջական:

Խոսքի տրամաբանությունը: Կապակցված խոսքում պետք է պահպանվի մտքերի և դեպքերի հաջորդականությունը, դրանց փոխադարձ պայմանավորվածությունը, եզրակացությունները, դատողությունները պետք է լինեն հիմնավորված :

Խոսքը ճշգրիտ է ինչպես իրականությանը համապատասխան փաստերի, դիտումների զգացմունքների ճշգրիտ հաղորդման, այնպես էլ դրանք ներկայացնելու համար անհրաժեշտ բառերի, բառակապակցությունների, դարձվածքների, նախադասությունների դիպուկ ընտրության դեպքում:

Խոսքի հարստությունը պայմանավորված է թեմայի վերաբերյալ խոսողի ունեցած հարուստ տեղեկույթով, հոմանիշների, հականիշների, դիպուկ արտահայտությունների, առածների և ասացվածքների, զանազան լեզվաարտահայտչամիջոցների տեղին գործածությամբ, խոսքի բովանդակությունը տարբեր իրադրություններում լավագույն կերպով հաղորդող զանազան կառուցվածք ունեցող նախադասություններով:

Խոսքի պարզությունը նրա մատչելիությունն է ունկնդրի կամ ընթերցողի համար, կողմնորոշումը դեպի որոշակի հասցեատիրոջ կամ թիրախային խմբի, խոսողը կամ գրողը հաշվի պետք է առնի խոսքի նպատակը, վայրը, ունկնդրի կամ ընթերցողի տարիքը, սեռը, դիրքը, հնարավորությունները պահանջմունքները, հետաքրքրությունները և այլ պայմաններ: Պետք է նկատի ունենալ, որ խոսքի խառնաշփոթությունը, նախադասությունների շարահյուսական ծայրահեղ բարդությունը, ծանրաբեռնումը մեջբերումներով, անվանումներով, թվերով, անհարկի հոմանիշներով, ավելորդ

կրկնություններով և մանրամասներով, <<պաճուճանքով>>, մակաբույծ բառերով այն դարձնում են խրթին, անհասկանալի, ունկնդրման համար՝ տհաճ:

Խոսքի արտահայտչականությունը խոսքի որակական հատկանիշ է (մասնավորապես բանավոր), որը ենթադրում է առավելագույն ազդեցություն ունկնդրի վրա: Բանավոր խոսքն ունկնդրի վրա ազդում է խոսողի ձայնի ազդեցիկությամբ, տեմպով, ժեստերով, դիմախաղով, տարաբնույթ արտահայտչամիջոցներով, ընդհանուր մտքերի տրամաբանությամբ, նպատակահարմար փաստերի շարադրմամբ, անհրաժեշտ և հարմար բառապաշարի ընտրությամբ, դարձվածքներով, իսկ գրավոր խոսքը նաև առոգանության նշաններով ու կետադրությամբ:

Խոսքի ճշտությունը, գրավոր խոսքի համար պահանջվում է քերականական, ուղղագրական և կետադրական, իսկ բանավոր խոսքի համար՝ նաև ուղղախոսական կանոնների պահպանում:

Խոսքի ճշտությանը հատուկ ուշադրություն պիտի դարձվի, քանզի գրական լեզվի տիրապետման պայմաններից մեկը նրա հիմնական նորմերի գիտակցական պահպանումն է: Հաշվի առնելով այս տարրական դպրոցում խոսքի մշակույթի ձևավորման գործընթացն իր մեջ պիտի ներառի աշխատանք հետևյալ ուղղություններով.

1. շեշտադրություն և արտասանություն,
2. բառի և արտահայտության իմաստի ըմբռնում,
3. քերականական նորմերի պահպանում,
4. բառակապակցության և նախադասության յուրացում:

Թվարկված հատկանիշները սերտորեն փոխշաղկապված են և ուսումնական գործընթացում դրանց ձևավորումն իրականացվում է համաձույլ: Խոսքային գործունեության մեջ կարևոր դեր ունի նաև հաղորդակցման ոճը: Պայմանականորեն առանձնանում են հաղորդակցման ոճի 5 տեսակ և դրանց համապատասխան՝ խոսքի հինգ ոճ

- **խոսակցական ոճը՝** կիրառվում է առօրեական-կենցաղային ոլորտում հաղորդակցվելիս
- **գիտական ոճը՝** գիտության և տեխնիկայի բնագավառում,
- **գործնական ոճը՝** պաշտոնական-գործնական հարաբերությունների ժամանակ,
- **հրապարակային ոճը՝** հասարակական- քաղաքական պրակտիկայում,

- **գեղարվեստական ոճը՝** արվեստում:

Հաղորդակցման իրադրության այս կամ այն ոճն արտահայտման ձևերի առջև, բնակականաբար, դնում է որոշակի պահանջների ինչպես բովանդակության, այնպես էլ լեզվական միջոցների ընտրության առումով:

Գլուխ 2

Հարցաթերթիկային վերլուծություն

Հետազոտական աշխատանքի նպատակին հասնելու համար օգտագործել ենք՝

- Դիտման մեթոդ(դասալսումներ)
- Հարցախույզ (ուսուցիչների շրջանակներում)

Կրտսեր դպրոցականների կապակցված բանավոր խոսքի զարգացումը մայրենիի դասերին թեմայի վերաբերյալ ուսուցիչների վերաբերմունքն ու դիրքորոշումն մենք համարում ենք կարևոր: Այս նպատակով մենք հարցախույզ իրականացրինք տարրական դպրոցի ուսուցիչների շրջանակներում: Հարցախույզը իրականացվել է Հ. Հայրապետյանի անվան հ. 78 դպրոցի տարրական դասարաններում: Հարցախույզին մասնակցել է 1-ից 4-րդ դասարանների 9 ուսուցիչ : Ներկայացնենք հարցախույզի արդյունքները:

Նախ և առաջ մեզ հետաքրքրում էր, թե որ դասարաններում են դասավանդում 10 ուսուցիչներից յուրաքանչյուրը: Դրա հիման վրա հսկանալով թե որ դասարանում է գրակշռում հետևյալ թեման:

Հարց 1: Նշեք խնդրեմ , թե ո՞ր դասարանում եք դասավանդում:

Հարցման արդյունքում պարզ դարձավ , որ 40% –ը դասավանդում է 4-րդ, 25%-ը 2-րդ, 20%-ը 3-րդ, իսկ 15% –ը 1-ին դասարաններում:

Հարց 2: Ի՞նչ դժվարությունների եք առճակատվում դուք և ձեր աշակերտները մայրենիի դասերին կրտսեր դպրոցականների կապակցված բանավոր խոսքի զարգացման ճանապարհին :

Հարցախույզից պարզ դարձավ որ ուսուցիչների 47% –ի կարծիքով աշակերտների մոտ դժվարություն է առաջանում խոսքի մեծ մասը բառբառային բառեր օգտագործելը, 33 %–ի համար աշակերտների դժվարություն է խոսքում սխալ շարադասությունը , իսկ 20 %–ի համար քիչ կարդալը և անուշադրություն:

Տվյալ խնդիրը լուծելու նպատակով ուսուցիչների խորհուրդ է տրվում միշտ աշակերտների հետ շփումը և դասապրոցեսը անցկացնելմիայն գրական հայերենով , քանի որ մեր հետազոտությունը իրականացվել է մարզային գյուղական դպրոցներում ,պարզից էլ պարզ է որ աշակերտների խոսքում ավելի գերակշիռ տեղ է զբաղեցնում բարբառայի խոսքը , և կարելի երեխաներին նաև հորդորել , որ ոչ միայն դպրոցում , այլև տանը խոսեն գրական հայերենով:

Հարցախույզից պարզ դարձավ , որ ուսուցիչների 73 %–ը չունի ոչ մի խնդիր նշված թեման իրագործելու համար, իսկ ուսուցիչների 27 %–ի համար խնդիր էր ճիշտ մեթոդների ընտրությունը , որոնք կլինեն նպաստող երեխաների կապակցված խոսքի զարգացմանը :

Հարց 3: Ո՞ր աշխատանքներն են ավելի նպաստում կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի ձևավորմանը և զարգացմանը :

- բնագրի ընթերցում,
- բնագրի վերլուծություն,
- պատմում,
- Ինքնուրույն աշխատանքներ(փոխադրություն, շարադրություն և այլն),
- Բոլորը

Ուսուցիչների 80% – ի համար բոլոր տարբերակներն էլ նպաստում են կապակցված խոսքի զարգացմանը, 8 %–ի համար նպաստում է բնագրի ընթերցումը, 5% – ի համար պատմումը, իսկ 7 %–ի համար բնագրի վերլուծությունը:

Հարց 4: Ինչպիսի՞ մեթոդներ կարելի է օգտագործել կապակցված խոսքը զարգացնելու համար:

- դերային խաղեր
- բանավեճեր,
- խմբային աշխատանքներ քննարկումներով
- հարց ու պատասխան

Ուսուցիչների 48 %–ի համար ավելի արդյունավետ է դերային խաղերը, 30 %–ի համար հարց ու պատասխանը , 15 %– ի համար բանավեճերը , իսկ 7 %–ի համար խմբային աշխատանքները քննարկումներով:

Հարց 5: Արդյո՞ք միայն դասագրքերի ստեղծագործությունները և առաջադրանքները բավական են կրտսեր դպրոցականների կապակցված խոսքը կառուցելու և զարգացնելու համար:Հիմնավորեք պատասխանը:

Հարցումից պարզ դարձավ , որ 63% – ի համար բավական չեն , քանի որ աշակերտը չպետք է բավարարվի միայն դասագրքով , պետք է նաև լրացուցիչ աշխատանքներ կատարի, և կարդա ոչ մայն դասագրքի ստեղծագործությունները, այլ լրացուցիչ հանձնարարված հեքիաթները , պատմվածքները:

37 %–ը միայն դասագիրքը համար էլ բավական , քանի որ նրանք նույնպես աշխատում են աշակերտների հետ:

Եզրակացություններ

1. Ուսումնասիրելով ուսուցիչների կարծիքները, եկանք այն եզրակացության, որ պետք է կիրառել տարբեր մեթոդական հնարներ , որոնք կնպաստեն, որ երեխաների մոտ լիովին զարգացած լինի բանավոր և կապակցված խոսքը:

2. Եկանք այն եզրակացության , որ պետք է զարգացնել երեխաների կապակցված բնավոր խոսքը , որպեսզի նրանք խոսեն ճիշտ, մաքուր, գիտակցորեն, սահուն:

3. Այսպիսով իրականացնելով մասանգիտաական գրականության ուսումնասիրում, եկանք այն եզրակացության որ էլ ավելի մեծ ներդրում կարող ենք ունենալ երեխաներ խոսքը զարգացնելու ուղղությամբ:

4.Եկանք այն եզրակացության, որ կրտսեր դպրոցականների կապակցված խոսքը զարգացնելու համար , պետք է կիրառեն որոշակի մեթոդներ և հնարներ, որոնցից են օրինակ ՝ մտագրոհ , կողմ դեմի աղյուսակ , ինչու ոչ նաև խթանիչ հարցադրումներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, -Եր., «Զանգակ-97», 2009, - 349 էջ:
2. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., «Մայրենի 1»,-Եր., էդիթ Պրինտ, 2010, - 63 էջ:
3. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., «Մայրենի 2»-ի ուսուցչի ձեռնարկ,-Եր., էդիթ Պրինտ, 2007, -79 էջ:
4. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ.,«Մայրենի 2», -Եր.,էդիթ Պրինտ, 2009, -160 էջ: